ՀՀ Արագածոտնի մարզի <<Բյուրականի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ – ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ <<Անգլերեն >> առարկայի /16 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։ Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցելու ցանկացողները պետք է ներկայցնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափսի։

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ։

3. Անձը հաստատող փաստաթուղթ։

4. <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից, առկայության դեպքում նաև աշխատանքային գրքույկի պատճեն։

5. Ինքանկենսագրություն (Ձև 5)։

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ։

7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ ։

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)։

9. Որակավորման տարակարգ ունենալու հավաստող փաստաթուղթ։

10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս ցուցաբերած արդյունքի մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում)։

11. <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ։

12. <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 30-ից հունվարի 16-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10։00—15։00-ն։

Մրցույթը տեղի կունենա հունվարի 20-ին՝ ժամը 14։00-ին, Բյուրականի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում։

Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Բյուրկան համայնք, փ. 1, նրբ. 1, շ. 1։

Հեռ.՝ 033-55-93-13